

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2, 21
ՇԱԾԿԱԳԻՐԸ «ՀԱՆ-ԳՀԱՇԶԲ-01/20»

ք.Երևան

«27» 03 2020թ.

«Հայալեռնավիզացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է «Հայալեռնավիզացիա» ՓԲԸ կանոնադրության հիման, այսուհետ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Պ.Մխիթարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մետաղական կառույցների մոնտաժման աշխատանքներ՝ Երևան (EVN) P3D և Գյումրի (GYU) P3D բազմադիրքային դիտարկման համակարգերի նոր կողային կայանների տեղադրման համար անհրաժեշտ դիրքերի նախապատրաստման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **6 900 000 (վեց միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ**: Կատարողը ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, սուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնան-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներդասյակ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագրի կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի զինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիների կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են զնվող աշխատանքի ծավալների կամ ձևեր բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել

պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին: 7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Ս Վ Ի Դ Ա Տ ՈՒ

«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ

ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ

Ի Գասպարյան 33

Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ

ԱՇԻՑ «Զվարթնոց» մ/ճ

Հ/Հ 2422 01216144

Գլխավոր տնօրեն

Ա. Գասպարյան

ստորագրություն



Կ.Տ.

Կ Ա Տ Ա Դ Ո Ղ

«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան,

Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53

Գործունեության հասցե՝ ք. Երևան, Ֆուչիկի 9/1

Հ/Հ՝ 1570016078840100

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

ՀՎՀՀ 00114704

Տնօրեն

Պ. Մխիթարյան

ստորագրություն



« 27 » 03
 Հավելված N 1
 2020 թ. կնքված
 N 2.21 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							կատարման	
Ձ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափան միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը
1	45221140/1	Տես՝ հավելված 1.1	դրամ	6900000	6900000	1	Տես՝ հավելված 1.1	մինչև 20.06.2020թ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

« Հայաէրոնավիգացիա » ՓԲԸ
 ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
 Ի.Գասպարյան 33
 Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
 ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
 ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն
 Ա.Գասպարյան
 ստորագրություն

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
 Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
 Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53
 Գործունեության հասցե՝ ք. Երևան, Ֆուչիկի 9/1
 Հ/Հ՝ 1570016078840100
 «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 00114704

Տնօրեն
 Պ. Մխիթարյան
 ստորագրություն



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹՍԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Համաձայն 10.02.2020թ. թիվ 2.09 կնքված պայմանագրի 3.6.1 կետի՝ իրականացվում է կողային կայանների տեղադրման վայրերի նախապատրաստական աշխատանքներ: Գնման առարկա է հանդիսանում <<Մետաղական կառույցների մոնտաժման աշխատանքներ>>:

1.Գնման առարկայի բնութագիր՝ Երևան (EVN) P3D և Գյումրի (GYU) P3D բազմադիրքային դիտարկման համակարգերի, նոր կողային կայանների տեղադրման դիրքերի նախապատրաստման աշխատանքները ներառում են հին կայմերի, կայմերի վրա տեղադրված անալոգային ալեհավաքների, շենքի ներսում գտնվող հին սարքավորումների, հարթակների ապամոնտաժում և սարքավորումների պահարանների տեղադրման համար անհրաժեշտ հարթակների, շենքերի ներսում մալուխատարների, մալուխային ուղիների և հողանցման կետերի, մալուխային մուտքերի պատրաստում, դեպի ալեհավաքներ տանող մալուխատարների վերանորոգում և նորերի մոնտաժում, ալեհավաքների տեղադրման համար անհրաժեշտ կայմերի և շանթարգելների պատրաստում, աստիճանահարթակների և անվտանգության ճաղավանդակների պատրաստում և (նոր կայմերի, հենասյուների, ամրակների, շանթարգելների, աստիճանահարթակների, անվտանգության ճաղավանդակների և եռակցված կարերի) ներկում:

Նյութերի ապահովումն իրականացնում է Կատարողը (Կապալառուն):

Օգտագործվող նյութերը պետք է լինեն նորը:

Կատարողը պարտավոր է 10(տաս) աշխատանքային օրվա ընթացքում վերացնել հայտնաբերված թերությունները:

Աշխատանքների երաշխիքային ժամկետի հաշվարկը սկսվում է Պայմանագրի ավարտից անմիջապես հետո և կազմում է մեկ տարի:

1. Ընդհանուր պահանջներ

Երևան (EVN) P3D և Գյումրի (GYU) P3D բազմադիրքային դիտարկման համակարգերի նոր կողային կայանների տեղադրման համար անհրաժեշտ դիրքերի նախապատրաստման աշխատանքների ընդհանուր պայմաններ

- 1.1. Հողանցման համար նախատեսված կետերը պետք է պատրաստվեն Կատարողի կողմից և տեղակայված լինեն անտենաներից շինություն էկոդ մալուխների մուտքերի, բարձր լարման պաշտպանիչի (OVP) մոտ, սարքավորումների պահարանների անմիջական հարևանությամբ:
- 1.2. Ալեհավաքներից մինչև շինության մալուխային մուտքեր նախատեսվող նոր մալուխատարները պետք է լինեն մետաղյա, իսկ շենքերի ներսում տեղադրվող մալուխատարները՝ մետաղյա և գործարանային արտադրության:
- 1.3. Ալեհավաքների և մալուխատարների տեղադրման համար անհրաժեշտ բոլոր հենարանները և կոնստրուկցիաները պետք է պատրաստվեն Կատարողի կողմից:
- 1.4. Բոլոր հարթակները և կոնստրուկցիաները (նոր, և՛ ստկա) պետք է համապատասխանեն սարքավորումների չափերին ու ծանրությանը, և ապահովեն կայունություն: Սարքավորումների տվյալներն են՝ Պահարան – 19" 150 կգ և UPS- 19" 320 կգ:
- 1.5. Կատարողը պատասխանատվություն է կրում սարքավորումների համար օժանդակ կառույցների ոչ պատշաճ նախապատրաստման կամ տեղադրման արդյունքում (ներառյալ հատակի բեռի) անձնակազմին կամ գույքին հասցված որևէ վնասի համար:

**Ցանկ
Նոր կողային կայանների**

1. Սպիտակ
2. Ստեփանավան
3. Լավար
4. Իջևան
5. Նորատուս
6. Մասրիկ
7. Ջերմուկ
8. Սիսիան
9. Գորիս
10. Կապան
11. Սեմյոնովկա



1. Սպիտակ

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02763 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է տվյալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Հարթակի վերին մասում (զծ. 5 և նկ.1) առկա խողովակի վրա տեղադրված պլեհավաքների ապամոնտաժում:
2. Ընդունիչ պլեհավաքի մալուխը պլեհավաքին միացնելու համար աշտարակի վրա առկա մալուխատարը (Նկ. 3) երկարացնել 15000 մմ-ով:
3. Ընդունիչ պլեհավաքի մալուխի անցկացման համար աշտարակի ստորին մասի մալուխատարը երկարացնել 8000մմ-ով (նկ. 4):
4. GPS պլեհավաքի մալուխի համար մոնտաժել 9000 մմ երկարությամբ մալուխատար (զծ. 3):
5. Շենքի հարավային մասի անկյունից 1500մմ-2000մմ հեռավորությամբ մոնտաժել GPS պլեհավաքի ամրակը (զծ. 4 և նկ. 5):
6. GPS պլեհավաքի ամրակը պատրաստվում է Կատարողի կողմից՝ բռնիչի չափերը՝ 300 մմ բարձրություն և 400 մմ լայնություն (խողովակի տրամագիծը 50մմ) (զծ. 4):
7. Պատուհանի վերին անկյունում (նկ.2) մոնտաժել անցում՝ 1x7/8" և 1x3/8" տրամագծով մալուխների մուտքի համար դեպի շենք: Անցքի չափերն են՝ 200մմx200մմ:
8. Անցումից դեպի սարքավորումների պահարանները մոնտաժել մետաղյա գործարանային արտադրության 5000մմ երկարությամբ մալուխատար (նկ.2):

2.Ստեփանավան

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02764 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է տվյալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Հարթակի վերին մասում տեղադրված հին կայմի (Նկ 2) ապամոնտաժում և 120 մմ տրամագծով 2000 մմ բարձրությամբ խողովակի մոնտաժում՝ ընդունիչ պլեհավաքի տեղադրման համար:
2. Ընդունիչ պլեհավաքի մալուխը պլեհավաքին միացնելու համար աշտարակի վրա առկա մալուխատարը (Նկ. 2 և զծ.1) երկարացնել 12000 մմ-ով:
3. Ընդունիչ պլեհավաքի մալուխի անցկացման համար աշտարակից դեպի շենք մալուխատարը երկարացնել 15000մմ-ով (Նկ. 6 և զծ.1):
4. Մալուխատարի համար՝ հենարանների տեղադրում (Նկ 6):
5. Շենքի ետնամասում GPS պլեհավաքի մալուխի համար մոնտաժել 15000մմ երկարությամբ մետաղյա մալուխատար (Նկ. 5, 6 և զծ.1):
6. Շենքի հետնի պատին, բացել անցում մալուխների մուտքի համար դեպի շենք, անցքի չափերն են՝ 200մմx200մմ (Նկ. 6):
7. Անցումից դեպի սարքավորումների պահարանները մոնտաժել մետաղյա գործարանային արտադրության 5000մմ երկարությամբ մալուխատար (Նկ. 4):
8. Շենքի անկյունից 1500մմ-2000մմ հեռավորությամբ մոնտաժել GPS պլեհավաքի ամրակը(Նկ. 5): GPS պլեհավաքի ամրակը պատրաստվում է Կատարողի կողմից: Բռնիչի չափերը՝ 300 մմ բարձրություն և 400 մմ լայնություն (խողովակի տրամագիծը 50 մմ) (Նկ. 5 և զծ.4):

3.Լավար

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02765 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է տվյալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Աշտարակի միջնամասում՝ 24000մմ բարձրության վրա, սպասարկող անձնակազմի համար կառուցել 700մմx8000մմ և 700մմx4000մմ չափերով անկյունաձև հարթակ (նկ. 1):

2. Երկու ռեֆլեկտորներով ընդունիչ ալեհավաքների տեղադրման համար (նկ.5), հարթակից 1000մմ բարձրության վրա մոնտաժել 50մմ-60մմ տրամագծով, 1000մմ երկարությամբ (զծ.1), 2 խողովակներ աշտարակի (լայնությամբ անկյունագծով) երկու կողմերում (նկ. 1):
3. GPS ալեհավաքի տեղադրման համար առկա մալուխատարին (նկ. 9) ամրացնել 1000մմ բարձրությամբ և 50մմ-60մմ տրամագծով խողովակ (զծ.2):

4.Իջևան

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02766 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է տվյալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Հարթակի վերին մասում մոնտաժել 120 մմ տրամագծով 3000 մմ բարձրությամբ խողովակ՝ ընդունիչ ալեհավաքը տեղադրելու համար (Նկ 1): Խողովակի վրա մինչև 2000 մմ բարձրությամբ աստիճանահարթակների պատրաստում (Նկ. 2):
2. Աշտարակի վերին մասում (զծ.1) մոնտաժել հարթակ (1000մմx1500մմ) ճաղավանդակներով:
3. Կայանի վրա տեղադրված չօգտագործվող անալոգային ալեհավաքների ապամոնտաժում (Նկ.2) և փոխարենը մեկ շանթարգելի մոնտաժում (զծ.1):
4. Աշտարակի վերին հարթակում անցկացնել նոր մալուխատար 7000մմ երկարությամբ (զծ. 1):
5. Մալուխային ուղու վրա մոնտաժել GPS ալեհավաքի տեղադրման համար խողովակ՝ 50մմ-60 մմ տրամագծով և 1000 մմ բարձրությամբ (Նկ. 3,5 և զծ.1,2):
6. Անցկացնել 15000 մմ երկարությամբ մետաղյա գործարանային արտադրության նոր մալուխատար՝ մինչև սարքավորումների պահարաններ (զծ.1):

5.Նորաստու

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02767 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է տվյալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Աշտարակի վերևում գտնվող բոլոր անալոգային ալեհավաքների (Նկ.2) ասպամոնտաժում և 3000 մմ բարձրությամբ շանթարգելի մոնտաժում:
2. Աշտարակի վերևում 89 մմ տրամագծով 1500 մմ բարձրությամբ խողովակի մոնտաժում՝ ընդունիչ ալեհավաքի տեղադրման համար (Նկ.1 և զծ.2):
3. Մալուխները ալեհավաքին միացնելու համար առկա մալուխային ուղղուն ավելացնել 16000մմ նոր մալուխային ուղի, որից 10000մմ-ը պետք է տեղակայվի հարթակից վերև (Նկ. 8, զծ.1):
4. Աշտարակի ստորին մասում տեղադրված Ucom-ի (VIVACELL) մալուխային ուղղին երկարեցնել 4000մմ-ով (Նկ. 9):
5. Ընդունիչ ալեհավաքի մալուխը տեխնիկական սրահ մուտք գործելու համար բացել մալուխային մուտք (Նկ. 7): Անցքի չափերն են 200մմx200մմ:
6. Շենքի ներսում ընդունիչ ալեհավաքի մալուխի համար անցկացնել մետաղյա գործարանային արտադրության նոր մալուխատար՝ 5000մմ երկարությամբ (Նկ.3,4):
7. Շենքի ճակատային մասում բացել մալուխային մուտք՝ 50մմ տրամագծով՝ GPS ալեհավաքի մալուխի համար (Նկ. 6):
8. Շենքի ներսում մոնտաժել մետաղյա գործարանային արտադրության մալուխատար 18000մմ երկարությամբ՝ GPS ալեհավաքի մալուխի համար (զծ.1):
9. Մուտքի մոտ (Նկ.6) մոնտաժել GPS ալեհավաքի համար նախատեսված 50մմ տրամագծով բռնիչ (խողովակ): Բռնիչի (խողովակի) չափերը՝ բարձրությունը 300մմ լայնությունը 400մմ (զծ. 3):

6.Մասրիկ

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02768 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է տվյալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Աշտարակի վերևում գտնվող բոլոր անալոգային ալեհավաքների (Նկ.2,3) ապամոնտաժում և 3000 մմ բարձրությամբ շանթարգելի մոնտաժում (զծ 1):
2. Աշտարակի վերևում 89մմ տրամագծով 1500մմ բարձրությամբ խողովակի մոնտաժում՝ ալեհավաքի տեղադրման համար (Նկ 2 և զծ.2):
3. GPS ալեհավաքի մալուխի համար, շենքի ներսում մոնտաժել մետաղյա գործարանային արտադրության 16000մմ երկարությամբ մալուխատար (զծ 1):
4. Բացել նոր մալուխային մուտք (Նկ.7) 50մմ տրամագծով՝ GPS ալեհավաքի մալուխի համար:
5. GPS ալեհավաքի տեղադրման համար նախատեսված բռնիչը (չափերը՝ բարձրություն 300մմ, լայնություն 400մմ, տրամագիծ 50մմ զծ.3) մոնտաժել մալուխային մուտքի մոտ (Նկ 7):
6. Առկա մալուխային մուտքից դեպի սարքավորումների պահարանները 5000մմ երկարությամբ մետաղյա գործարանային արտադրության մալուխատարի մոնտաժում (զծ 1):

7.Ջերմուկ

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02769 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է սվիալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Շենքից 2000մմ հեռավորության վրա գտնվող աշտարակի վերին հարթակում 120մմ տրամագծով և 2000մմ բարձրությամբ խողովակի մոնտաժում՝ ընդունիչ և GPS ալեհավաքները տեղադրելու համար (Նկ. 3,4,5,զծ.2):
2. Ընդունիչ և GPS ալեհավաքներից մինչև շինության մալուխային մուտք նախատեսվող 15000մմ երկարությամբ նոր մալուխատարը պետք է լինի մետաղյա, իսկ շենքերի ներսում տեղադրվող մալուխատարը՝ 7000մմ երկարությամբ, մետաղյա գործարանային արտադրության(Նկ.2 և զծ.1):

8.Մխիան

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02770 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է սվիալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Տեխնիկական սրահի տանիքի վրա մոնտաժել 120մմ տրամագծով և 3500 մմ բարձրությամբ խողովակ, ընդունիչ և GPS ալեհավաքների տեղադրման համար (Նկ. 1,2, զծ.2): Խողովակի հիմքը ամրացվում է ձեղնահարկում (Նկ.3):
2. Ընդունիչ և GPS ալեհավաքների մալուխները ալեհավաքներին միացնելու համար բացել անցք դեպի ձեղնահարկ և շենքի տանիք՝ 60 մմ տրամագծով: Տեղադրել մետաղյա խողովակ ձեղնահարկից տանիք 60 մմ տրամագծով և 1000մմ երկարությամբ, մալուխները ալեհավաքներին միացնելու համար (Նկ.2):
3. Տեխնիկական սրահում ընդունիչ և GPS ալեհավաքների մալուխները սարքավորումների պահարաններին հասցնելու համար, մետաղյա գործարանային արտադրության նոր մալուխատարի մոնտաժում՝ (Նկ.6 և զծ.4) 8000մմ երկարությամբ:

9.Գորիս

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02771 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է սվիալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

1. Շինության տանիքի վրա տեղակայված է մետաղական կոնստրուկցիա, որի վերին մասում աշխատանքներ կատարելու նպատակով պետք է մոնտաժվի նոր հարթակ: Հարթակի չափերը՝ 300մմx1500մմ (Նկ. 1,2,3) և աստիճան հարթակ բարձրանալու համար:
2. Հարթակի վերևում 120մմ տրամագծով և 2000 մմ բարձրությամբ խողովակի մոնտաժում՝ ընդունիչ և GPS ալեհավաքների տեղադրման համար (Նկ. 1, 2 և զծ. 1):

- Շենքի տանիքին (Նկ.6) ընդունիչ և GPS ալեհավաքների մալուխների համար նոր մալուխային ուղղու մոնտաժում՝ 5000մմ երկարությամբ, առկա մալուխատարի երկայնքով:
- Առկա մալուխային մուտքից դեպի սարքավորումների պահարանները մոնտաժել 8000մմ երկարությամբ մետաղյա գործարանային արտադրության մալուխատար (Նկ. 8):

10. Կապան

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02773 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է տվյալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

- Աշտարակի ստորին մասում՝ 8000մմ-10000մմ բարձրության վրա 50մմ-60մմ տրամագծով և 1000մմ բարձրությամբ խողովակի մոնտաժում ռեֆլեկտորով՝ ընդունիչ ալեհավաքի տեղադրման համար (Նկ. 1,2 և գծ.2):
- Ընդունիչ ալեհավաքի մալուխը ալեհավաքին միացնելու համար հին մալուխային ուղղու վերանորոգում (գծ. 1):
- Նոր GPS ալեհավաքի բռնիչի մոնտաժում շենքի պատին՝ մալուխային մուտքի մոտ (Նկ 4): Բռնիչի չափերը՝ բարձրությունը 300մմ, լայնությունը 400մմ, տրամագիծ 50մմ (գծ. 4):
- Տեխնիկական սրահում սարքավորումների նոր պահարանների տեղադրման համար հին պահարանների ապամոնտաժում (Նկ 3 և գծ. 1-ի):
- Առկա մալուխային մուտքից դեպի սարքավորումների պահարանները մոնտաժել 10000մմ երկարությամբ մետաղյա գործարանային արտադրության մալուխատար (Նկ. 3):

11. Սեմյոնովկա

Հիմք ընդունելով ERA ընկերության կողմից ներկայացված EX014OA02774 00 համարակալված գծապատկերները և նկարները՝ նկարագրվում է տվյալ կողային կայանի տեղադրման համար անհրաժեշտ աշխատանքների տեխնիկական բնութագիրը:

- Փոքր աշտարակի վերին մասում գոյություն ունեցող կոնտրուկցիայի վրա, ընդունիչ և GPS ալեհավաքների տեղադրման համար՝ 2000մմ բարձրությամբ և 120մմ տրամագծով անհրաժեշտ է խողովակի մոնտաժում, ամրացման ձևն ու եղանակը Կատարողի հայեցողությամբ (Նկ.1,4 և գծ.2):
- Ընդունիչ և GPS ալեհավաքների մալուխների համար 15000մմ երկարությամբ մալուխային ուղղու մոնտաժում (Նկ.1,2):
- Աշտարակից մինչև շենք 5000մմ երկարությամբ մետաղյա մալուխատարի մոնտաժում (գծ.1):
- Շենքի ներսում մոնտաժել մետաղյա գործարանային արտադրության մալուխատար 30000մմ երկարությամբ (Նկ.5,6,7,8,9):

Պ Ա Ս Վ Ի Բ Ա Տ ՈՒ

«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ

ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ

Ի.Գասպարյան 33

Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ

ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ

ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն

Ա. Գասպարյան

ստորագրություն

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան,

Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53

Գործունեության հասցե՝ ք. Երևան, Ֆույիկի

9/1

Հ/Հ՝ 1570016078840100

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

ՀՎՀՀ 00114704

Տնօրեն

Պ. Մխիթարյան

ստորագրություն



« 27 » 03 Հավելված N 2
 2020 թ. կնքված
 N 221 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221140/1	Մետաղական կառույցների մոնտաժման աշխատանքներ՝ Երևան (EVN) P3D և Գյումրի (GYU) P3D բազմադիրքային դիտարկման համակարգերի նոր կողային կայանների տեղադրման համար անհրաժեշտ դիրքերի նախապատրաստում աշխատանքների	6900000	6900000	6900000	6900000	6900000	6900000	6900000	6900000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
 ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
 Ի.Գասպարյան 33
 Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
 ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
 ՀՎՀՀ 01216144
 Գլխավոր տնօրեն
 Ա.Գասպարյան
 ստորագրություն

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

«ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
 Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
 Այգեձորի 1-նրբ., 22 շ., բն. 53
 Գործունեության հասցե՝ ք. Երևան, Ֆուչիկի 9/1
 Հ/Հ՝ 1570016078840100
 «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
 ՀՎՀՀ 00114704
 Տնօրեն
 Պ. Մխիթարյան
 ստորագրություն

Կ.Տ.



Հավելված 3
« 27 » 03 2020 թ. կնքված
N 2.21 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

Կատարված աշխատանքների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.



Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

« 27 » 03 Հավելված 3.1
 2020 թ. կնքված
 N 2.2 պայմանագրի

ԱԿՏ N
 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ


Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
 (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
 Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց



 ազգանուն, անուն

 ստորագրություն


Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ ազգանուն, անուն

 ստորագրություն


OVERALL VIEW OF THE SITE



DETAIL X (1:20)
ANTENNA ALZW PLACEMENT


Pac. 4

DETAIL X



Pac. 3

GROUND PLAN (1:50)




4ePT.1

VIEW D (1:50)
ANTENNA ALZW PLACEMENT

4ePT.2


VIEW C (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA

Pac. 5



DETAIL Y

Pac. 1



Pac. 5

VIEW A



Pac. 6

VIEW B (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA



4ePT.3

Pac. 5

VIEW C (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA

VIEW D (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA

VIEW E (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA

VIEW F (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA

VIEW G (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA

VIEW H (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA

VIEW I (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA

VIEW J (1:1)
FROM EAST - 20' TO ANTENNA


FINAL VERSION	
DATE	10/10/00
BY	...
CHECKED BY	...
APPROVED BY	...
SCALE	AS SHOWN
PROJECT NO.	EX0140A02769_00
REV.	00

THIS DRAWING IS THE PROPERTY OF THE COMPANY AND IS NOT TO BE REPRODUCED OR TRANSMITTED IN ANY FORM OR BY ANY MEANS, ELECTRONIC OR MECHANICAL, INCLUDING PHOTOCOPYING, RECORDING, OR BY ANY INFORMATION STORAGE AND RETRIEVAL SYSTEM, WITHOUT THE WRITTEN PERMISSION OF THE COMPANY.

ALL DIMENSIONS UNLESS OTHERWISE SPECIFIED ARE IN METERS. DIMENSIONS IN PARENTHESES ARE IN FEET AND INCHES. DIMENSIONS IN FEET AND INCHES ARE TO BE USED FOR CONSTRUCTION PURPOSES ONLY. DIMENSIONS IN METERS ARE TO BE USED FOR ALL OTHER PURPOSES.

1. THE CONTRACTOR SHALL BE RESPONSIBLE FOR OBTAINING ALL NECESSARY PERMITS AND APPROVALS FROM THE LOCAL AUTHORITIES. THE CONTRACTOR SHALL BE RESPONSIBLE FOR OBTAINING ALL NECESSARY PERMITS AND APPROVALS FROM THE LOCAL AUTHORITIES. THE CONTRACTOR SHALL BE RESPONSIBLE FOR OBTAINING ALL NECESSARY PERMITS AND APPROVALS FROM THE LOCAL AUTHORITIES.

SITUATION ON THE TOWER (1:1)



NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA

NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA

Pac. 1

ERA CABINET PLACEMENT (1:1)

ERA CABINET PLACEMENT (1:1)

NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA




NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA

Pac. 3

E (1:20)

ANTENNA GPS PLACEMENT



NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA

Pac. 4


SITUATION ON THE TOWER (1:1)



Pac. 2

E-E (1:10)

ANTENNA AZW PLACEMENT




NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA

Pac. 3

D (1:25)


ANTENNA AZW PLACEMENT



Pac. 2


E (1:10)

ANTENNA GPS PLACEMENT



Pac. 4

GROUND PLAN (1:100)



ERA INSTALLATION

Pac. 1

Pac. 5

NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA

NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA

NEW ANTENNA CABINET
NEW ANTENNA
NEW ANTENNA
NEW ANTENNA

FINAL VERSION	
DATE	10/10/2011
BY	...
FOR	...
PROJECT	...
NO.	EX0140A02773_00

